



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՆՔԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ԵՐԵՍՈՒՆԵԿԱՅԵՐՈՐԴ :

24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ

— 1871 —

ՆՄՍ 12

24 Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Բ 1871

ՆԱԽԱԳԱՀ.—ՍՐԲԱԶՈՆ ՊԱՏՐԱՐՔ
ԱՏԵՆԱՊԵՏ—ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՑ. (Առժամանակեայ կարգեալ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Բնորոշիւն ԱՊԳ. վարչութեան Կրօն. Ժողովոյ
2. Ատենական կանոնադրութիւն.
3. Համարատուութիւն ԱՊԳ. վարչութեան Քաղ. Ժողովոյ
4. Տեղեկագիր Գաւառական Հարստահարութեանց Գննիչ Յանձնաժողովոյ
5. վերաքննութիւն Սահմանադրութեան.— Գլուխ Ա.
6. կեդրոնացումն և Աղակերտումն

Ասեանք բանալու ժամն անցած և Ատենապետ Է. Ֆիլիպովն ոչ ոք եկած ըլլալով, Նախագահ Սրբազանի հրահրանքով Ղազարուեան Գ. Է. Ֆիլիպովը երկրագոյն երեսօխտան՝ ելալով ի Գիւան առժամանակեայ ատենապետութեան պաշտօն վարելու և ատենաքրտագիտ Ե. Մ. Ա. ին ի ներկայութեան Ա. Երեսօխտանաց, որոց թիւը հեռագրեալ է 58 ի յանդէսը:

Ատենապետ Է. Ֆիլիպովի պատճառաւ այսօրուան նստին բացակայ գտնուելու ստիպեալ երեսօխտանաց անուանքը թուել յետոյ. յայտնեց թէ՛ օրուան կարգին անցնելէ առաջ՝ ըստ սովորութեան ժողովոյ ներկայանալի գանաղան խնդիրներ կան թէ՛ և Գիւանին վրայ, ինչպէս՝ նախընթաց չորս նստից ատենադրութիւնը, երեսօխտանական նորոգ ընտրութեանց տեղեկագիր մը, անցեալ նստին մը նացեալ երրորդ բացակայութիւնը և նախորդ կրթական խորհրդոյ դիտողութիւնքը փոթով նկատողութեան անուրջ համար Քաղ. Ժողովոյ կողմէ՛ առաջարկութիւն մը. սակայն, ըսաւ,

ըստ որում այս խնդրոց ամենն ալ անմիջակաւ որոշում կ'ենթադրեն զրեթէ և առ այժմ մեծագոյն մաս չունիմք, Գիւանը պատշաճապոյն կը համարէ խնդրոց կարգը ձեռք առնուլ և նախորդ նստին առ կախ մնացած կրօն. Ժողովոյ խնդիրն ենթարկել անմիջակաւ վիճարանութեան որպէս զի ժողովը ժամանակ ունենայ այս ամենակարեւոր խնդրոյն լուծում տալ այսօր:

Ատենապետ Է. Ֆիլիպով այս յայտարարութիւնն ընելէ ետեւ կը հրահրէ զՊէկեան Է. Ֆիլիպովը, որ նախորդ նստին խօսք ուզած էր, իւր կարծիքն յայտնել կրօն. Ժողովոյ խնդրոյն վրայ:

Պէկեան Է. Ֆիլիպով կատարել թէ՛ խնդրոց կարգին անցնելէ առաջ՝ պէտք է ըստ նախորդ որոշման ատենադրութիւնը դիտողութեան երթարկին, որոյ կը ձայնակցին Տ. Ղ. Է. Կ. Կ. վարդապետ և ժամակոչեան Է. Ֆիլիպովը: Իւր թէպէտ Պէկեան և ժամակոչեան Է. Ֆիլիպովը բարձր կը բառնան Ատենապետ Է. Ֆիլիպովի ընդդիմութեան դէմ, առաջինը կրօն. Ժողովոյ խնդիրն ևս թողուլ և երկրորդը՝ նախորդ որոշումը յարգել սնդեալ, այլ սակայն կրօն. Ժողովոյ խնդիրն առաջնելու հա-

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ


ԿՐԿՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՐԱՐՈՒՄ ԿՈՄԻՏԵՍԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՎ

ՅԱՐԱՐՈՒՄ 1871 ՎՈՅՆՈՎ

ԿՐԿՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՐԱՐՈՒՄ 1871 ՎՈՅՆՈՎ



ՍՐԲԱԶՈՆ

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

1871

մար, խորովը լռին հակամէտ կը թուի Նախագահ Սրբազանի առաջարկութեան, զոր կը կրկնեն Փափազեան էֆ. և Տ. Ամբրոսիոս Արքայեան: Եւ վերջապէս Երևանի էֆ. ի այն առաջարկութիւնը, թէ կրօն. խորովոյ խնդրէն յանձնապէս ետքն ատենագրութեանց խնդիրն յանձնուի, ամեն կողմէ ընդունելութիւն կը գտնէ. ուստի և Ատենապետ էֆ. կրօն. խորովոյ խնդիրը ձեռք կ'առնու:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՎԱՆՐՉՈՒԹԵԱ ԿՐԾՆ. ԺՈՂՈՎՈՅ.

Աղաբեկեան Մ. էֆ. կ'առարկէ թէ առաջին խօսքն իրեն պէտք է տրուի, այն պատճառաւ որ՝ նախորդ նստի մէջ գրաւոր առաջարկութիւնը միայն կրցած էր կարգաւ և ոչ ժամանակի սղութիւնը՝ միջոց, ոչ ալ մեծադոյն մասի չդոյութիւնը՝ տեղի տուած էին իրեն բերանացի բացառութեամբ պարզարանել զայն, Սակայն Ատենապետ էֆ. նախորդ նստէն մը նացորդ խօսից կարգին հետեւելով խօսքը Պէկեան էֆ. ի կուտայ:

Պէկեան թ. էֆ. — (Գրք. Ազգ. վարչութեան ֆաբրիկան խորովոյ ընտրութիւնը կատարուելն անմիջապէս ետև, երբ կարգը կրօնական խորովոյն եկաւ, Աղաբեկեան Մարկոս էֆ. խնդիր յարոյց անոր գոյութեան ըսկողմանցը նկատմամբ:

Թէև այդ խնդիրը Սահմանադրութեան վերաբնութեան մէջ իր տեղը պէտք էր յաւելուիլ սակայն որովհետև Աղաբեկեան էֆ. ի առաջարկութեան շրջ խորովը հաւանութիւն տուաւ ուրիշ նստի մը մէջ լսել իրեն մէջ բերելիք պատճառները, ուստի նախորդ նստին խօսեցաւ նա իր փաստերը:

Հակահարծիք գտնուելով իրեն խօսեցայ եւս նոյն նստի մէջ, որչափ ներեց արարածամեայ որը, և ընդհատեցի խօսքս ներկայ նստի մէջ շարունակելու համար, և ահա՛ այսօր կ'առնուի խօսքիս թելը պատկառելի խորովոյց հաւանութեամբը:

Աղաբեկեան Մ. էֆ. իւր ատենարանութեան մէջ պատմական օրինակներ մէջ կը բերէ հաստատելու մտք թէ՛ չին ատենները առանձին Սինոդ կամ կրօն. խորով չկար, այլ թէ ՚ի պահանջել հարկին եկեղեցականք ու աշխարհականք ՚ի միասին խորով կը հասցնէին, որով կը հետեւնէ թէ կրօն. խորովոյ որդի գրութիւնը նորամուտ է, և զեղծում է: Երբմէ եւս կը

հետևի, եթէ ոչ ՚ի պահանջել հարկին եկեղեցականներէ ու աշխարհականներէ ժողով դուրս ել, զէթ արդի գրութեան կրօն. ու ֆաղ. խորովներն ՚ի մի վերածել:

ԱՂԱԲԵԿԵԱՆ Մ. էֆ. — (Ընդհանր. էֆ.) Կը տեսնեմ որ իմ խօսքերս սխալ են հասկցուեր: Կը կրկնեմ Ատենապետ էֆ. թէ նախ ինձ պէտք է խօսք տրուիլ, որպէս զի . . .

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — (Ընդհանր. էֆ.) Ձեր խնդրածն ապօրինաւոր է. ըստ խօսից կարգին պէտք է որ նախ Պէկեան էֆ. խօսի, եթէ նա սխալ հասկացողութիւններ ունի, խօսքը ձեզ արուած ժամանակ կրնաք զանոնք ուղղել:

ԱՂԱԲԵԿԵԱՆ Մ. էֆ. — (Յորհ. և Բար. էֆ.) Ձեր ըրածը բռնաբարութիւն է. անցեալ նստի մէջ չուղեցի երկար խօսիլ, զի ոչ ժամանակ կար և ոչ ալ մեծադոյն մաս. իմ խօսքս թերի մնաց, այսօր պէտք է նախ ինձ խօսք տաք, որ բացատրեմ և ստորագրեմ. եթէ հոս արդարութիւն և իրաւունք չպիտի յարգուին, ես կը հրաժարիմ:

Թեթև շուկ մը կը ծաւալի խորովոյն մէջ. բայց ոմանք երեսփոխանք կը հանդարտեցնեն զԱղաբեկեան էֆ. և Պէկեան էֆ. խօսից թելը ձեռք կ'առնու:

Պէկեան թ. էֆ. — (Երբ. և Բար. էֆ.) Աղաբեկեան Մ. էֆ. ի բոլոր փաստը պատմութեան ծաղկաբաղ է, թողով որ այդ մասը ձեռնհասները քննադատեն, ես ուրիշ տեսութեամբ իրեն կ'ընդդիմաբանեմ:

Մեր Ազգի իր Եկեղեցին ունի, որ իր հընտրութեամբ կը փայլի, բայց մեր Ազգը միանգամայն իր քաղաքականութիւնն ունի, ո՞ր ազգ, թէ հպատակ թէ տիրող, չունի իր քաղաքականութիւնը, իր մասնաւոր շահը ու վրէնսը. ով որ կըսէ թէ չունի, կը կեղծէ. մեր Ազգն ալ, այո՛, ունի իր քաղաքականութիւնը. յանուն այս քաղաքականութեան կընդդիմանա՞մ Պղաբեկեան Մ. էֆ. ինոր գրութեան դէմ, զոր թէեւ հին կ'անուանէ, բայց Ազգին արդի վարչական գրութեան նկատմամբ նոր է: Եւ քանի որ ազգի մը իւր շարժիչ քաղաքականութեան կողմը նկատողութեան պիտի առնուի, ահա՛ մ'ալ պատմականը մէկդի թողով՝ արտոնքանական փաստեր մէջ բերենք. փաստեր՝ որք կարենան ասացուցանել կրօն. ու ֆաղ. խորովոյ միացման Ազգին օգտակար կամ վնասակար ըլլալը:

Ես վնասակար ըլլալը պիտի ցոյց տամ. Տեա՛րք

իմ, եթէ խորին ցաւ մ'ունիմ, ճամարութիւններ Կրկն խօսելու հարկին մէջ գտնուիլս է, որմէ խոյս տալն ինձ հնար չէ:

Եթէ ֆաղ. ու կրօն. խորովներն ՚ի մի վերածուին, աշխարհականներն եկեղեցականաց հետ հաւասար իրաւունքով ամեն կրօնական խնդրոց վրայ ալ պիտի վիճին ու ձայն ունենան. Ազգին ներկայ վիճակին մէջ գիտէ՞ք թէ ինչ կրնայ հետեւիլ ատկից. եթէ հակազգային շահերու ծառայող եւ օտար ազդեցութեանց ենթակայ աշխարհականներ գտնուին Ազգին մէջ եւ կրօն. խորովոյ մէջ մտնեն, կրօնական խնդրոց մէջ ալ պիտի կարենան իրենց ենթակայն եղած ազդեցութեան բաղձանաց համաձայն ձայն հանել ու եկեղեցականաց ձայնը խեղդելու յաջողիլ, մինչդեռ ներկայ դրութեամբ եկեղեցականք կրօն. խորովոյ մէջ իրենց կարծիքն ազատօրէն յայտնելու և պաշտպանելու դիւրութիւն կը վայելեն, եւ արդի գրութիւնն այս նկատմամբ սա առաւելութիւնն ալ ունի, որ երբ խնդիր մը ծագի ու օտար ազդեցութիւն մը հրահանգ տայ ազգային աշխարհական սլաշտօնէից այն ինչ խնդիրն այսպէս կամ այնպէս կարգադրելու, սոյն պաշտօնեայք կրնան խոյս տալ այդ յանձարարութեան, առարկելով թէ այդ խնդիրը կրօնական ըլլալով՝ կրօն. խորովոյ կը պատկանի:

Այս երկու խորովները միացնել, կերպով մը կրօնականաց ձայնն անհետ ընել է, կրօնականաց՝ կրօնքն ու եկեղեցին յատկապէս սլաշտպանելու համար ստանձնած բեռը մեր աշխարհականացս վրայ ծանրացնել է, մինչ անհամար ու դառն փորձերով ցուցուած է ազգային գործոց պաշտպանութեանը մէջ մեր անկարողութիւնն ու անարիութիւնը. մենք որ քաջութիւն չունինք անկ եղած տեղը, հարկ եղած ժամանակ ներկայանալով ըսելու թէ՛ «այս ինչ դէպքը մեր Ազգին շահուն կը վնասէ կամ Եկեղեցոյն հակառակ է», մենք որ այդ ընելու կարող չեմք, որովհետև մեր անձնական ու մասնաւոր շահերն ունինք, էլ իր եկեղեցական ազատ ու անկախ սլաշտօնէից վրայն անոնց պաշտօնական բեռն ալ ՚ի սլաշտօնէ մեր վրայ կուգենք առնել. եւ ինչ հարկ թողունք որ այդ բեռն եկեղեցականք տանին, այսպէս կը պահանջէ Ազգին շահը, Ազգին քաղաքականութիւնը. թողունք որ նորա ներկայանան վեղարնին գլուխին, փիլոնին կանակին, եթէ հարկը պահանջէ, ուր որ հարկ է բողո-

քեն. թէ ֆրիստօնէութեան սուրբ եւ ահաւոր խորհրդոյ նշխարնը շահը վիզը կ'սխալը՝ ֆրիստօնէական կրօնքին դէմամենէն մեծ նախատինքն է:

Թողունք որ նորա այդ արդար բողոքն ընեն, զի նորա անկախ են, օտարէն ոչ շահ ունին և ոչ մեզի պէս երկիւղ, որովհետև ապրուստին Ազգէն է, միանգամայն անձերին մասամբ անբռնարարելի: Կը յիշեցնեմ Ձեզ, Տեա՛րք, Պողոս Պատրիարքի օրով Եպիսկոպոսաց Մեծ Եպարքոսին ներկայանալով անմիջական արդիւնք ձեռք բերելնին: Կը յիշեցնեմ Ձեզ Տեա՛րք ապա՛հ Արիտակէս Սրբազան Հօր ազգային պատուոյ նախանձախնդրութեամբ ազդու վարմունքը: Եկեղեցականը միայն կարող էր այդ ընել յանուն ազգային իրաւասութեան, և ո՞ր աշխարհական կարող է նմանօրինակ վարուիլ առանց հետեւանքը տուժելու: Եկեղեցականաց շահու աղբիւրը մէկ է. խորովուրդը, եկեղեցին է, բայց աշխարհականացը դանազան է, մէկ մէկէ տարբեր և մէկ մէկու հակառակ շահու աղբիւրներ ունին անոնք, հետեւաբար տարբեր ու հակառակ շահերու ալ կրնան աւելի քան զեկեղեցականս ծառայել: Ո՞վ կրնայ հաւատալ որ բնդհանրապէս մարդիկ իրենց անձնական շահն Ազգին շահէն վեր բռնեն, ու առաջինը երկրորդին զոհեն. բնականի դէմ է այդ. մարդս նախ իր անձն ու ընտանիքը, երկրորդ իր Ազգը կը սիրէ. բայց իր անձին շահն Ազգին շահուն զոհողներ կը գտնուին եղբր, կրնայ ըլլալ, որովհետև իրենց անձն իսկ Ազգին համար զոհողներ գտնուած են ու տակաւին կրնան գտնուիլ, բայց ատի բացառութիւն է, որ բնական ու ընդհանուր օրինաց կարգ չանցնիր: Արդ՝ քանի որ անձնական ազգայինէն նախադաս է բնական կարգաւ, ինչո՞ւ ընդունինք մեր վարչութեան եղանակին մէջ այնպիսի դրութիւն մը, որ անձնական շահու առաջնութեան պատճառաւ փեղի տայ ազգային շահուն վնասուելուն, սկզբունքէն խորչինք, Տեա՛րք, հետեւանացը տեղի չտալու համար:

Երբ Ազգն անկախ ճինակի մէջ եղած ըլլար, այն ատեն ֆաղ. ու կրօն. խորովոց միացումը գուցէ կրնար Ազգին օգտակար ըլլալ, որովհետև ազգային կառավարութեան ու Եկեղեցոյ շահերը միեւնոյն ըլլալովը աշխարհականք և եկեղեցականք միատեղ կրնային ազգին կրկին շահերը համազօր պաշտպանել պաշ-

ածնապէս ինչպէս կը պաշտպանէին երբեմն մեր իշխաններն ու նախարարները . 'ի պահանջել հարկին եկեղեցականաց հետ թէ և ոչ միշտ 'ի ժողով գումարուելով , կը պաշտպանէին որովհետև անկախ Ազգի մը պաշտօնեաներն էին , որք ազգային կառավարութեան ու Եկեղեցւոյ շահերը հաւասարապէս պաշտպանելու պաշտօնն ունէին , որովհետև ազգային կառավարութեան ու Եկեղեցւոյն շահերը մի և նոյնն էին և իրենց շահն ալ Ազգին շահուն հետ կապուած էր , մինչ այժմ եկեղեցականներ ունինք աւելի տրամադիր անկախօրէն այդ կըրկին շահերը պաշտպանելու : Հնութիւնը մեզի կը յիշեցնեն և այդ հրապուրիչ անունով կուզեն իրենց պահանջումը տեղը տանիլ . բայց չեն ուզեր նկատելու թէ պարագաները նոյն չեն , ոչ քաղաքական անկախ հին վիճակինս ունինք և ոչ աշխարհագրական վազմի դիրքերնին :

Ազգային վարչութեան արդի դրութեամբ կըրկերն այսպէս զատ կրօն . Ժողով կազմելով 'ի պահանջել բուն հարկին , առանց սպասելու Երեսօրհանական Ժողովոյ համարաութեան պայմանաժամին կրնայ 'ի պաշտպանութիւն կըրօնական և ազգային իրաւանց բողոք բառնալ Քաղ . Ժողովոյ դէմ : երբ սա պատահի երբէք որ Ազգին ու Եկեղեցւոյ շահերուն հակառակ որոշում տալու ըլլայ . այսպէս ահա լաւ հրահրութիւն մը +նշու մը կը կատարէ կրօն . Ժողովը Քաղաքականին և փոխադարձաբար :

Արդի դրութիւնն անհուն առաւելութիւն մ'ալ ունի , զոր պիտի ձեռքէ փախցնենք առաջարկեալ դրութեան հաստատութեամբ : Մեր ազգային վարչութիւնը երկու ճիւղ ունի , կըրօնական ու քաղաքական կամ աշխարհական , այս երկու ճիւղերուն ալ գոյութիւնը Բարեխընամ կառավարութիւնը ժամանակաւ շնորհած ու խօնելը Հիւսիսային ով ալ հաստատած ու ապահոված , հետեւաբար ազգային-քաղաքական խնդրոց միջամտելու իրաւունքնին ընդունած է . այդ իրաւունքն ահա պիտի փճանայ երկու Ժողովոց միացմամբ . այն իրաւունքը որ արդէն կուզուի Ազգէն զրանալ պիտի փճանայ , որովհետև Քաղ . Ժողովը կրօնականին հետ միանալովն անոր պաշտօնն ալ դիւրաւ պիտի չափաւորի ու տակաւ վերնայ . նորակազմ ժողովոյն բնութիւնը բաւական պիտի ըլլայ ցուցնելու թէ իւր պաշտօնը կրօնական հասարակութեան մը կրօնական դործոց միայն տեսչու-

թիւնն է : Եկեղեցւոյն հրամանադիրը որ զըրկուած է վերջի ատեններս 'ի Պատրիարքարան . քաղ . խնդրոց չ'միջամտելու համար . յիշենք գաւառներու մէջ տեղական իշխանութեանց առաջնորդներն աշխարհական դործոց միջամտելէ արդիւնելու համար բրած ջանքն ու փորձերը . դեռ տարակոյս կը մնայ թէ արդէն տըրկարացնել կամ ետ առնել ուզուած առանձնաշնորհութիւն մը կորսնցնելու մեծապէս պիտի նպաստէ այդ ձեռնարկը , այդ դրութիւնը որ ներկային նկատմամբ նոր է . . .

Ազարէգեան Մ . էֆ . ոսք կեղնէ յանկարծուտ և բուն կերպիւ կը բողոքէ բարձրաձայն ատենարան էֆ . ի խորհուրտ ձայնին ու շարժուածքին դէմ : Իմէ կճեան էֆ . սլ ձայնակցելով Ազարէգեան Մ . էֆ . ի , աղմուկ կը յտնէ Ժողովոյն մէջ և բարեկարգութիւնը կը խանգարի : Ժողովականք բողոք կը բառնան ու մանք ատենարանութիւնն ընդմիջողաց դէմ և ումանք ալ ատենարան էֆ . ի շարժուածոց Ազարո էֆ . դիտել կուտոյ ատենարան էֆ . ին թէ իւր խօսուածքն ու նայուածքը ' զորս միշտ Ազարէգեան էֆ . ի կուղղէ ' կը դրդուն զայս վերջինն և իրաւամբ . և թէ այժոք է որ Գիւտնին դատնայ և ատենարանէ , ինչպէս օրէն է :

Վերջապէս Ատենապետ էֆ . կը յաջողի բարեկարգութիւնը վերահաստատել : հրաւիրելով դատենարան էֆ . որ շարունակէ իւր խօսքը :

ՊԵՂԵԱՆ Թ . ԷՖ . — (Շքանուէլ-Չ) Տարակոյս չունենանք թէ երբ առաջարկենք այս երկու Ժողովոց միացումը ընդգիմութիւն չենք գտնել , մեր բաղձանքն իսկոյն կը կատարուի ումանց հնութիւն անուանած դրութիւնը , որուն վրայ այնչափ հիացած են իրենք , դիւրաւ կը շնորհուի , բայց երբ փորձով վերահասու ըլլանք անոր միասակար հետեւանացն և ուզենք ներկայ դրութիւնը վերահաստատել , առանձնաշնորհութիւննին պահանջել , կը յուսաք ձեռք անցնել . տիրող Ազգին քաղաքականութեան սկզբունքն ու մեր հպատակութեան բուր հանգամանքը լաւ նկատողութեան առնելք , այսչափ միայն կարող եմ աղղել , և այսչափին համար իսկ դատնապէս ցաւ կըզգամ , բայց չը դիտեմ թէ ինչո՞ւ համար վերջի ատեններս այսպիսի ծանր խնդիրներ հետզհետէ մէջ կը բերուին , որք զմեզ բնադատական վիճակի մէջ կը մղեն :

Երեսօրհաններէն ոմանք կը վախնան որ գատ

կրօն . Ժողով ունենալու արդի դրութիւնն արմատաւորեալ Պապականութեան զեղծ . շիններն մեր Ազգի մէջ ալ չ'մտցնէ և Եկեղեցին Ազգէն բաժնէ . ես ալ կը վախնամ կղերական տիրապետութենէն որ սրագականութեան յատուկ է , բայց կը փութամ փարատել իրենց այդ երկիւղը որ անտեղի է : Մեր Ազգին մէջ եկեղեցականք ու աշխարհականք ձեռք ձեռքի տուած կը գործեն և Եկեղեցւոյ շահերն 'ի միասին կը պաշտպանեն . կազմած ներկայ Ժողովինս , ուր եկեղեցականք ու աշխարհականք 'ի միասին բազմած են , ազգացոյց մ'է ըսածիս , բաւական է ք համարիր ասի , բանաւք Սահմանադրութեան վարչութեան մասը , աչքէ անցնելք ունոր ամեն ճիւղերն ալ , Գառաւորանական Ժողովոյ մէջ կը տեսնենք եկեղեցականք և աշխարհականք խառն , Վանօրէից Խորհրդոյ , կուտակաց Հոգարարութեան մէջ նոյնը , Աստուծական Խորհրդոյ համար թէ և եօթն աշխարհականներէ կը բազմանայ ըսուած է , բայց այդ ալ ներկայ վարչութեան Աստուծական Խորհրդոյն կազմութեամբը , ուր անխտիր եկեղեցական անդամ ալ գտնուելով շտաբ . ուսուցիչ , հարկաւ Սահմանադրութեան վերաբնութեան մէջ այս կէտն ալ պիտի ուղղուի . իսկ Տնտեսական Խորհրդոյ և Ելեւոսից Հոգարարութեան կազմութեանը մէջ եկեղեցականներ չ'տեսնուելուն պատճառը այդ պաշտօններս սոսկ հաշուական ու գրամական ըլլալն է , Վարչութեան ճիւղերու մէջ ինչպէս կ'տեսնուի , եկեղեցականք ու աշխարհականք անխտիր յանդամակցութեան կը մասնակցին . միայն կրօն . Ժողովոյն եթէ աշխարհականք չեն մասնակցիր , ստոր ալ պատճառը ըսինք քաղաքականութիւնն է . մեր Ազգին շահն այսպէս պահանջած է ու կը պահանջէ . կրօն . Ժողովոյ մէջ միայն աշխարհականներ չ'գտնուելուն համար այդ վախն ու երկիւղը տեղի չ'ունի . ապահով թող ըլլան այդ երեսօրհանները որ ստով պատական կղերականութեան տիրապետութիւնը չէ կարող տիրել մեր Ազգին վրայ , քանզի դերագոյն հեղինակութիւն ունեցող սոյն երեսօրհանական Ժողովը կայ համարառու , ուր աշխարհականք ու եկեղեցականք խառն կը բազմին և ուր (ստորի դնելու մտօք չէ հարկ եղաւ որ ըսեմ) աշխարհականաց ձայնը շատ առաւել է եկեղեցականաց ձայնէն . այս երեսօրհանական Ժողովոյ գոյութիւնը բաւական է այդ կարգի երեսօրհանաց վախը փարատելու . չեն

ուզեր համարուիլ ստով , փորձ մը կը յիշեցնեն իրենց : Պողոս Պատրիարքին օրով կրօն . Ժողովն ամենուր ծանօթ կրօնական իրաւասութեան ցաւալի խնդիր մը յարոյց , որուն վախնալ թէ և Սահմանադրութեան պահ մը դադարուը եղաւ , բայց ինչ արդիւնք ունեցաւ այդ յարուցեալ խնդիրը , որ արդարեւ կղերական տիրապետութեան փորձ մ'էր , թէ և Սահմանադրութիւնն այդ պատճառաւ վերաբնութեան երթարկեցաւ , բայց անոր մէջ այդ իրաւասութիւնը ձանցուցաւ . բնաւ երբէք . ուրեմն այդ երկիւղն անտեղի է :

Հնութիւնը պաշտպանել ուղղ երեսօրհանները հակասութեան մէջ ընկած են . մէկ կողմանէ կրօնն թէ հին ատենները Միւսող ու կրօն . Ժողով չ'կային , այլ 'ի պահանջել հարկին , եկեղեցականք ու աշխարհականք 'ի միասին ժողով կը գումարէին , միւս կողմանէ կը պահանջեն որ կրօն . Ժողովոյ կազմութիւնը խառն ըլլայ , ուրեմն կընդունին մնայուն կրօն . Ժողովոյ գոյութիւնը , բայց չեն ընդունիր անոր առանձին եկեղեցականներէ բազմանալը :

Արդ՝ քանի որ հնութեան անունով կրնեն իրենց այդ պահանջումը , և քանի որ իրենց խօսքին նայելով հին ատեններու մէջ մնայուն Միւսողի կամ կրօն . Ժողովոյ գոյութիւնը կը ժխտեն , ուրեմն հակասութեան մէջ են :

կրօն . Ժողովոյ գոյութիւնը կրօնական մասին Պատրիարքին ու Առաջնորդաց իրենց պաշտանին մէջ զեղծումներն արդիւնելու սկզբունք հաստատուած է , հակադրութիւն մ'է , մէկ խօսքով պէտք մ'է , զոր պարագաներն ու ժամանակը ծնած է Ազգին ներկայ վիճակին մէջ հակադրութեան անգոյութեանը պատճառաւ , ազգային վարչական արդի դրութիւնը , Տեալք , իր անթերի գործադրութեանը մէջ ընտիր քննարկ մ'ունի . եթէ բան մը կը պահի այն ալ ժողովրդեան հակադրութիւնն է , այժոյ է որ արթնանայ ժողովուրդն ու իր հակադրութեան իրաւունքը գործադրէ , որպէս զի Երեսօրհանական Ժողովոյ արարքն ալ իր օրինաւոր հակադրութեան երթարկելով վարչական դրութիւնն իր կատարելութիւնը ստանայ . այս նպատակին հասնելու միջոցները խորհինք , բայց խորհինք Քաղ . ու կրօն . Ժողովները մէկ մէկու խառնելէ , զի միասնեքը մեծ են և հետեւանք դատն մեզ նման հպատակ ազգի մը համար : Տեալք . կ'եղբակացնեմ թէ քանի որ հպատակ ազգ մը եմք , կրօնական հասարակութեան անուամբ

ճանչցուած, ազգին շահերը զանազան նշկատումներով, զորս բաւական բացատրեցի, կը պահանջեն որ անկախ եկեղեցականներէն բաղկացեալ առանձին կրօն. ժողովն ունենանք, պահելով ի գիտելի հարկին խառն ժողով կազմելու սովորութիւնը:

Տ. ՄԱՏԹԻՍՈ ՎՐԴ.— Նախընթաց նստի մէջ կրօն. ժողովոյ կազմութեան եղանակին վրայ Աղարէգեան Մ. էֆ. ի ըրած պատմական դիտողութիւններէն վերջը ես կրօն. ժողովոյ կազմութեան ստիպողականութիւնը նկատողութեան առնելով առաջարկեցի որ առ ժամայն կրօն. ժողով մը կազմեմք մեր արդի դրութեան համեմատ և Աղարէգեան Մ. էֆ. ի դիտողութիւնները Սահմանադրութեան վերաբնութեան մէջ ցին առնումը նկատողութեան: Օգտէն էֆ. ի սպաստասխանի իմ այս առաջարկութեան՝ հետեւեալ խօսքերն ըրաւ, որք կերեկին ատենագրութեանց 330րդ. երեսի մէջ. «Մարկոս էֆ. այնչափ ծանրացուց խնդիրն որ եկեղեցական սկզբունքի խնդիր մը յարոյց զոր Տ. Մատթէոս Վարդապետ ընդունեց, բայց յետոյ մեղանշեց: Եթէ մեր եկեղեցւոյ սկզբունքը դատ կրօնական մարմին ունենալու ղէմ է, ինչպէս կը հաստատէ Մարկոս էֆ. ինչպէս Տ. Մատթէոս Վարդապետ կառաջարկէ առ այժմ ըստ առաջնոյն կրօն. ժողով կազմել: Ես կրօնով որ նկատողութեան առնումը այս խնդիրն, և կուսմաւ սոսկալի մեղքի մը մէջ չընկնիմք, ամեն բան կրնամք ընել, բայց ինչ որ եկեղեցին մեզ աւանդած է, չեմք կրնար փոխել: Բարեբաղդ է ընդհ. ժողովն որ ցարդ չէ լուծեր կրօն. ժողովոյ խնդիրն. և ես դժբաղդ եմ որ անոր բնայութեան առաջնութիւն ունենալը պաշտպանեցի: Արդ Արքայան Պատրիարքը կրնայ, ինչպէս ըրաւ ցարդ, ընդ մ'ատեն ևս ինքնին հոգալ կրօնական դժբերն և մեք չեմք կրնար մինչև որ չվիճարանիմք, չընենք, չհամարուինք ու չբողոքենք: Կրօն. ժողովոյ ընտրութեան ձեւնարկել: ինչպէս կը տեսնուի Օգտէն էֆ. ի զրոյցներէն, իմ առաջարկութիւնս ասկալի մեղք համարուած է, սակայն գիտելի կուտամ որ, նախորդ նստի մէջ ես գրացի թէ Մարկոս էֆ. ի դիտողութիւնք երկար վիճարանութեանց դուստ պիտի բանային և ժողովոյ մի բանի նիստերն դրագեցնելին, ինչպէս որ այսօր փորձով իսկ կը տեսնեմք, մինչդեռ կրօն. ժողովոյ կազմութեան պէտքն անհրաժեշտ ստիպողականութիւն մ'եղած էր, Վարդապետն այս

ճիւղին վերաբերեալ կարեւոր և անմիջական լուծում պահանջող խնդրոց որ ըստ օրէ դիտուելու և ընտրուելու անխնամ մնալուն պատճառաւ. զի թէպէտ ունեցանք կրօն. ժողով մը, որ Գաղաքականին հետ կազմեցու, սակայն այդ ժողովն ընդ ամենը չորս նստի կրցաւ գումարի և այն ալ ապարդիւն: Նկատելով որ Մարկոս էֆ. ի առաջարկութիւնն՝ Սահմանադրութեան վերաբնութեան առթիւ յուզելի խնդրոց բնական ընթացքին մէջ իւր տեղն ու ժամանակն ունենալով՝ ինքնին երևան պիտի գար այն ատեն և վիճարանութեան ենթարկուելով ընդունելի պիտի լինէր կամ ժխտելի, ուստի այժմէն անտեղի և ունայն վիճարանութեանց տեղի չտալու և այս կարևոր խնդրոյն լուծումն աւելի չթողելու համար առաջարկեցի նախորդ նստի մէջ և կը կրկնեմ նաև այսօր որ, առայժմ կազմեմք Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն մեր կրօն. ժողովն և Սահմանադրութեան վերաբնութեան պահեմք Մարկոս էֆ. ի առաջարկութեան վիճարանութիւնը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Անցեալ նստին կրօն. ժողովոյ կազմութեան եղանակին վրայ Մարկոս էֆ. ի ըրած պատմական տեսութիւնն ու դիտողութիւնները լսեցինք, այսօր ալ Պ. կեան էֆ. ի մի և նոյն խնդրոյ վրայ, և իբր հերքում Մարկոս էֆ. ի դիտողութեանց, խորհրդածութիւնները մտիկ ըրինք: Պ. կեան էֆ. ի մէկ մեծ սխալը կուզեմ ուղղել: Պ. կեան էֆ. ի բարիաստարանութեանց գլխաւոր հիմ կը դնէ եկեղեցականաց անկախ վիճակն ու քաջութիւնն և օրինակներ մէջ բերելով՝ անոնց միայն սեպհականել կուզէ այն ամեն գործերն, որոց գործադրութեան մասին լոկ եկեղեցականներն ի տես ելած են ցարդ: Ասի արտաքին երեւոյթ մ'է, որ գաղտնիքն ունի իր մէջ, որոյ Պ. կեան էֆ. չկրնալով թախանցել, սխալ կարծիք մը կը յղանայ և այդ սխալին վրայ կրօն. ժողովոյ կրօնականներէ միայն բողոքանալու առաջարկութիւնը կը պաշտպանէ: Զորս Եսիսկապոսեց ինչ Գուան երթալը, Տեղապահ Արիստակէս Արքայանին արքեպիսկոպոստէն առնել քաջալը և այս տեսակ գործերն եկեղեցականք ինքնօրէն չըրին, այլ ժողովրդեան գործակցութեամբը: Հոս մեր մէջ գիտցողներ կան, աշխարհականաց խորհրդակցութեամբն ըրին այս ամենը: Եթէ իրենք իրենցմէ ըրած ըլլաւ ինչ, ինչ նշանակութիւն կրնային ունենալ.

եթէ ժողովուրդն եկեղեցականաց ետին չկանդնի, եթէ եկեղեցականք յանուն իրենց և ո՛չ ժողովրդեան այդպիսի գործերու միջամտեն, ինչ արդիւնք կարտադրուի եկեղեցականք Սզգին յարաբերութեանց միջնորդն են. այս ան ընդունուած է երկրիս մէջ. բնականաբար յանուն Ազգին ըլլալք որ և է յարաբերութիւն անոնց ձեռք պիտի ըլլայ: Սա ալ կը յանդուրծ թէ՛ երբէք եղած չէ որ աշխարհականք և եկեղեցականք ուրոյն ուրոյն գործեն, կամ աշխարհականք որոշեն և գործադրութիւնն եկեղեցականաց յանձնեն, այլ իբրև հայր ընդ որդի եկեղեցականք ընդ աշխարհականաց կը խորհրդակցին:

Արտուի թէ աշխարհականք՝ անձնական շահու հարկադրեալ՝ այդ անկախ դիրքէն դուրկ են. բայց չիան արդեօք եկեղեցականներ, որ իրենց անձնական շահն ամեն բանէ վեր դասեն. եթէ ապացոյց կուզուի, ահա Պողոս Պատրիարքն, որ 5000 զուրուշ ամսականն ապահովելու համար Ազգին աշեկոծ վիճակին վրայ անտարբեր կեցաւ: Ուրիշներ ալ կուզէք, կը յիշեցնեմ ձեզ դրացի երկրի մը մէջ մեր եկեղեցականաց վիճակն և ընթացքը, որք նշաններով և պատիւներով ձոխացեալ, ժողովրդեան վրայ ծանրացած են: Աղարէգեան Մարկոս էֆ. ալ կերելի թէ աւելի անոնց վիճակէն և ընթացքէն զգածեալ, երկիւղ և վրտանդ կը նշմարէ կրօն. ժողովոյ լոկ կրօնականներէ կազմութեանը մէջ, Կը արդարև եթէ այս նկատողութեանց խորը մտնեմք, պիտի տեսնեմք որ կառավարութեան մ'աւելի դիւրին է ազգ մը շահելու համար անոր եկեղեցականները շահիլ, քան թէ ժողովուրդը: Մեր Ազգն 2-3 միլիոն ժողովրդէ կը բաղկանայ հոս ի թուրքիս, բայց հազիւ 80 Եսիսկոպոս և 100 Վարդապետ կան, պաշտօնի և ազգեցութեան տէր: Աւազբութիւննիդ կը հրաւիրեմ այս կէտերուն վրայ և եկեղեցական հարց ներդրամութիւնը կը խնդրեմ այսպիսի նկատողութեանց իջնելու համար: Ազգասիրութիւնը կարգերու և գասերու չզատկանիր, այլ սրտերու: Արդ եթէ կին առանդութեանց դիմեմք, պիտի տեսնեմք որ եկեղեցական ժողովները միշտ աշխարհականաց ալ անեցեր են իրենց մէջ, թէև ես լսեմ եմ թէ՛ հաւատալեաց խնդրոց մէջ վճիռն Եսիսկոպոսեց կուտային: 1847 ին երբ ազգային երկու ժողովները, Հոգևոր և Գերագոյն, հաստատուեցան:

Հոգևոր ժողովոյն մէջ երկու ալ աշխարհականք անդամակից կը գտնուէին, ըսել է որ մեր ժամանակներու մէջ ալ այդ կին առանդութիւնը պահուած է: Թէև Հոգևոր ժողովոց մէջ աշխարհականաց ինչ աստիճան ձայն ունեցած ըլլալ չեմ գիտեր, բայց լսած եմ որ անգամ մը ժողովոյն եկեղեցական մէկ անդամն իւր աշխարհական անդամակցին խնդրոյ մը համար յայտնապէս ըսած է թէ՛՝ «դու այս խնդրոյն չես կրնար միջամտել, ասի սոսկ եկեղեցականաց կը պատկանի»:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— (Ընդհանր. 1) Այո, ես լաւ կը յիշեմ. այդ աշխարհական անձը Տէր Պողոսեան Գալուստ պատուելին էր, որ նոյն օրը ժողովէն դուրս հանեցին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— (Ընդհանր. 1) Երբ 1860 ին Ազգ. Սահմանադրութիւնը խորագրեցաւ, և Հոգևորը կրօնական, Գերագոյնն ալ Գաղաքական անուններու տակ առանձին ժողովներ եղան, կրօնականը սոսկ կրօնականներէ և Գաղաքականն ալ սոսկ աշխարհականներէ կազմուիլ տրամադրեցաւ, բայց այս առանձինն կազմութիւնը կրօնականաց ազգեցութեանը չժառայեց: Վկայ են մեզ նոյն ատենի ատենադրութիւնը: Ամեն բան Քաղ. ժողովը գործեր է, և ի հարկին կրօն. ժողով հետ խառն ժողով կազմեր է. բայց կրօն. ժողովը առանձինն ինչ ըրած ունի, զայն չեմ կարդացած: Մինչև 1863 միևնոյն ամուր ընթացքը շարունակուելէ ետքը, նոյն ատենի կրօն. ժողովն սկսեր է իբր թէ իւր իրաւասութիւնն ի գործ ածել, և այս ինչ կամ այն ինչ գաւառի առաջնորդներ անուանելով Քաղ. ժողովոյ հաղորդել, որ անմիջական ընդունել է: Այսպէս կարդացի Քաղ. ժողովոյ ատենադրութեանց մէջ: Կրօն. ժողովն ալ աւելի յառաջ երթալով՝ մինչև իրաւասութեան խնդիր մ'ալ հաներ է, որոյ հետեանքները հարկ չէ հոս յայտնել, բաւական է որ հաստատած ըլլամ թէ՛ ունեցած կրօն. և Քաղ. ժողովներն ալ իրենց պաշտօնին առձմանը չեն ճանչած, և երբեմն մէկն, երբեմն միւսն իրարմէ տուելի ազդեցութիւն գործածելու են ելած: Ահա դարմանելու արժանի կազմութեան խնդիրն, որ Սահմանադրութեան վերաբնութեանը կը վերաբերի:

Գաւառով արդի կազմութեան խնդրոյն Սահմանադրութիւնն այդ խնդիրը լուծած է

արդէն՝ Կրօն. Ժողովը կրօնականներէ և քաղաքական ալ աշխարհականներէ կը բաղկանայ, կրօն. Արդէն Գաղ. Ժողովը հաստատած եմբ սոսկ աշխարհականներէ, բնականաբար կրօնական ալ սոսկ կրօնականներէ պիտի բաղկանայ: Բայց Մարկոս էֆ. Կրօն. Ժողովոյ ընտրութեան խնդրոյն առթիւ, անոր կազմութեան խնդիրն հանեց և ուզեց որ խօսի. Ժողովն ալ ուզեց որ լսէ. հիմա կը տեսնենք որ Մարկոս էֆ. ի յարուցած խնդիրը բուն իսկ Սահմանադրութեան վերաքննութեան խնդիր է, ուստի և իբր սյդպէս քննութեան առնելու եմբ, եթէ Ժողովն արժան դատէ, սպաթէ ոչ այժմ ըստ Սահմանադրութեան Կրօն. Ժողով մ'ընտրել պէտք է, որոյ համար, ինչ որ Երինք Գաղ. Ժողովոյ ընտրութեան մէջ, նոյնը կրնամք ընել, այսինքն յանձնել Սրբազան Պատրիարք Զօր որ ինք ընտրէ ու Ժողովոյս ներկայացնէ ի վաւերացումն:

Մի մեծ անպատեհութիւն ալ Համազումար Ժողովոյ պատրաստելիք ընտրելաց ցանկի խնդիրն է: Գիտէ՞ք այս խնդիրն ուսկէ ծագեցաւ: 1860 Օգոստոս 28 ին կրր առաջին անգամ օրինաւոր նիստ ըրաւ սահմանադրապէս ընտրեալ Երեսփոխանական Ժողովը և Կրօն. ու Գաղ. Ժողովները պիտի ընտրէր: քանի մը խղճահար երեսփոխաններ բողոքեցին թէ աշխարհականք չեն կրնար մասնակցել Կրօն. Ժողովոյ ընտրութեան, և թէ իրենց խղճին դէմ էր քուէ տալ: Նոյն Ժողովոյ Նախագահ Սարգիս Պատրիարք, Յակոբոս Արքեպիսկոպոս նախկին Պատրիարք և այլ եկեղեցական Հարք փութացին յայտնել թէ հաստատուած Սահմանադրութեան մէջ Սուրբ Եկեղեցւոյ օրինաց հակառակ և խղճի դէմ բան մը չկայ, և թէ աշխարհականք ալ ընդ եկեղեցականս կրնան մասնակցիլ Կրօն. Ժողովոյ ընտրութեան, ինչպէս կրօնականք ալ Գաղ. Ժողովոյ, որով Ժողովը հանդարտութեամբ իւր ընտրութիւններն յառաջ տարաւ: Սակայն 1865 ին սահմանադիր Յանձնաժողովը նոյն բողոքն ուշադրութեան առնելով, բարեխառնել ուզեց է Կրօն. Ժողովոյ ընտրութիւնն և Համազումար Ժողովոյ յանձնել է եռապատիկ ընտրելաց ցանկ մը պատրաստել, Բնդհ. Ժողովոյ ալ՝ անոր մէջէն ընտրութիւն ընել: Ինչպէս որ Սահմանադրութիւնը կը տրամադրէ այժմ: Այս ցանկին պատրաստութիւնը կարեւորութիւն չունի բնաւին, վասն զի Կրօն.

Ժողով մ'ըստ Սահմանադրութեան 14 անգամ պէտք է ունենայ Պօլոյ մէջ գտնուող եկեղեցականներէն, որոյ ընտրելաց եռապատիկ ցանկ մը պատրաստելու համար Համազումար Ժողովը 42 անուն պիտի ցուցնէ, մինչդեռ ինքն ալ Պօլոյ եկեղեցականներէն կը բաղկանայ և 50-55 անդամակիցներէ աւելի թուով նիստ ըրած չունի: Ըսել կրնայ որ նախ իր ընդհանուր անդամոց անունները պիտի գրէ, և թիւը 42 ի լրացնելու համար քանի մը եկեղեցականաց անուններն աւելցնելով, ցանկը պիտի տայ Բնդհ. Ժողովոյն, բայց ինչ հարկ այս ձանձրութիւնը քաշելու և Սահմանադրութեան որ վերաքննութեան կարօտ է: Ի՞նչպէս անհրաժեշտ է կը դատուած երկու կողման ալ կրսեմ. Կրօն. Ժողովոյ ոչ սոսկ կրօնականներէ կազմուելուն մէջ երկիւղ կայ, և ոչ աշխարհականով խառն կազմուելուն մէջ: Այսօրուան կազմութեան ձեւը սոսկ կրօնականներէ ընտրել է, Ազգը կուզէ վաղը խառն կրնէ, միւս օր՝ դարձեալ կը փոխէ: Պարագանքն ալ մեղ առաջնորդ ունենալու եմբ, մեր մէջ եկեղեցականաց և աշխարհականաց խտրութիւն մուտ չէ դուրս մինչև ցարդ, ասկէ ետքն ալ կը յուսամք որ չգտնենք. ասի Հայաստանեայց Եկեղեցւոյ հոգին է, որ չփոխուի, ոչ մարդիկ և ոչ դէպքերը կրնան այսոյնիլ զայն: Անոնց, որ Կրօն. Ժողովը սոսկ կրօնականներէ բաղկանայը չեն ուզեր, կրսեմ, թո՛ղ չփոխանան Կրօն. Ժողովը համարաւոր է այս Բնդհ. Ժողովոյն, որ կրօնականներէ և աշխարհականներէ կը բաղկանայ. այս Բնդհ. Ժողովն ըստ ինքեան բաւական է ապացուցանելու թէ՛ Հայաստանեայց Եկեղեցւոյ և Հայ Ազգի հնաւանդ սովորութեան կնիքը կը կրէ, ընտրութիւններն ասկէ պիտի բղխին. հոգ չէ անոնց կազմութեան եզանակները. եթէ զիրենք վախճանող բաներ կան, որ տեսած են դրացի երկրի մը մէջ Հայ եկեղեցականաց վրայ, սրտաճառն՝ հոն ալ այս պիտի Բնդհ. Ժողովոյ մը չգտնուիլն է: Եւ անոնց որ Կրօն. Ժողովը սոսկ կրօնականներէ բաղկանալը կը պնդեն, այս երիտասարդ բարեկամացս իմ գոհունակութիւնս կը յայտնեմ, որ կրօնականաց դատուն կարեւորութիւնը կը փաստաբանեն: Ասկէ յառաջ թիչ էր մնացեր որ աշխարհական Պատրիարք ալ պիտի դըրուէր. ինչ որ է, այսօր կը մխրթարուիմք այս նշանաւոր փոփոխութեան վրայ: Բայց երկու ծայրէն ալ դժուշանամք, այնպէս որ եկեղեց.

ցական և աշխարհական մէկ մարմին և մէկ հոգի ըլլալէ չդադրին. ոչ եկեղեցականք առանձինն և ոչ աշխարհականք առանձինն կը բնաւ բան մը գործել: Եկեղեցականք առանձին կրօն. Ժողով կազմելով առանձին մարմին մը կազմած չեն ըլլար, կը կրկնեմ, քանի որ Կրօն. Ժողովոյ ընտրութիւնն ու վաւերացումը այն Բնդհ. Ժողովոյ կը պատկանի:

Նկատողութեան արժանի ուրիշ պարագայ մը կայ, որ Սահմանադրութեան մէջ մուտ գտեր է, տեղն եկաւ և կը պարտաւորիմ ըսել: Սոյն Բնդհ. Ժողովոյ անդամակից դատուն՝ եկեղեցականներէն ընտրուելու դրութեան անպատեհութիւնը, մինչդեռ թաղային ընտրութեանց մէջ եկեղեցականք և աշխարհականք անխտիր կը մասնակցին. այս անպատեհութիւնը գաւառաց մէջ Սահմանադրութեան գործադրութեան առթիւ վերցուած է արդէն երեսփոխանական նորոգ ընտրութեանց մէջ, սա սայմանաւ որ ընտրելի երեսփոխանաց թուոյն եթէներորդ մասն եկեղեցական պիտի ըլլայ: Կը յուսամք որ վերաքննութեան միջոցին Սահմանադրութեան մէջէն ալ կը վերնայ այս անպատեհութիւնը:

Ինչպէ՞ս կրնա ի, այս ամեն խնդիրները Սահմանադրութեան վերաքննութեան առթիւ յուզուելէ՞ք խնդիրներ են. այժմ Կրօն. Ժողով մ ընտրութիւնը հարկ է, ըստ Սահմանադրութեան. ես ալ կը ձայնակցիմ ուրիշներու առաջարկութեան հետ, որ Կրօն. Ժողովն ընտրեմք, և կամ անոր ընտրութիւնը Սրբազան Պատրիարք Զօր յանձնեմք, այն պայմանաւ որ մեղ ներկայացնէ ի վաւերացումն:

ԱՂԱԲԷԳԵԱՆ Մ. ԷՖ.— Ինչ որ պահ մ'առաջ ըսել կուզէի, ահա հիմա կըսեմ:

Նախ Ժողովէդ ներումն կը խնդրեմ մէկ քիչ բարձր սրտալուս համար: Պատճառն այն էր որ, նախ՝ Հայ եմ, Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակ, և անոր սկզբանց ու ոգւոյն անարատ պահպանութեանը նախանձամտիւր երկրորդ՝ որ իրաւանց բռնաբարութիւն էր ինձ դէմ եղածը: Պէտք էր խօսք արուիլ ինձ, վասն զի պիտի խնդրէի Ժողովէդ որ ուշի ուշով կարդայ և լաւ ըմբռնէ իմ խօսքերը:

Այ տեսնուի որ խիստ տարբեր կերպով հասկացուած են իմ ասածներն, և եթէ Պէկեան էֆ. ալ ուշադրութեամբ կարդար զանոնք, ինք ալ պիտի փոխէր իւր կարծիքը: Գիտել կուտամ նաև Ժողովոյդ որ ամեն և.

րեսփոխան խօսելու և ընդդիմաբանելու իրաւունք ունի, բայց Պէկեան էֆ. խօսելու այնպիսի մի խիստ եղանակ կը գործածէ, որ չտարադանց անվայել է. կարծես թէ ինքն է ստեղծեր այս Ժողովը, ինքն է նորա տէր և իշխող, իսկ մեք իւր ստրուկները. շատեր ինձ հետ կը բողոքեն այս մասին: Ես ալ պէտք եղած ատեն կը խօսիմ, բայց վայելուչ կերպով և խոնարհաբար. չեմ ըսեր թէ Պէկեան էֆ. չը խօսի, սակայն խօսելու եղանակաւ պէտք է որ խօսի. պէտք է քաղաքակալար լինի. պատկառի այս Ժողովն և յարգէ դանի: Ամենքս ս Հայ եմք և Հայու զաւակ և իբր երեսփոխան հոս հաւասար իրարու. ոչ ոք ի մէջ իրաւունք ունի այլոց վրայ ծանրանալու. պէտք է ամենքս ալ մեր չափը ձանչեմք եւ ըստ այնմ շարժիմք: Եթէ այս անվայել ընթացքն այսպէս շարունակէ և շատնաւի ևս՝ իբր երեսփոխան և անդամակից չեմ հանդուրժեր այդ լեզուին և մնաս բարով կըսեմ այս Ժողովոյն: Եւ եթէ . . .

Ատենապետ էֆ. կընդմիջէ զատենաբանը, պատճառելով թէ անձնական նկատողութեանց կեղծ Ժողովոյ մէջ:

Իֆէկճեմն Ն. ԷՖ.— Պէկեան էֆ. ի դէմ խօսելիքս Փափագեան էֆ. ըսաւ, ուստի անօգուտ կրկնութիւններ չընելով կը ձայնակցիմ Փափագեան էֆ. ի, և Տ. Մատթէոս Ապրդապետի առաջարկութիւնը կրկնելով կըսեմ թէ՛ Սահմանադրութեան վերաքննութեան պահեմք Մարկոս էֆ. ի առաջարկութիւնն ու այժմ՝ սահմանադրապէս Կրօն. Ժողով կազմեմք, եթէ հարկ կայ:

Իսկ Պէկեան էֆ. ի այն խօսքին դալով թէ՛ աշխարհականք Տէրութեան քաղաքականութեան գործիք վննելով . . .

Յանկարծուստ ոտը կեղծ Պէկեան էֆ. և կընդմիջէ զատենաբանը, գոչելով, «Չիս կամբաստանէք, դուք կուզէք զիս քաղաքականապէս սև ամբաստանութեան ներքեւ ձգել, ես Տէրութեան անուն չտուի թերևս ես կաթողիկոսութիւնը կամ բողոքականութիւնն ակնարկել ուղեցի»: Հետեւապէս աղմուկ կը յառնէ Ժողովոյն մէջ, եւ անհասկանալի գոչիւններ կը խափանեն Պէկեան և Իսէկճեան էֆ. ներու դէմ առ դէմ խօսքերը: Ատենապետ էֆ. ժողովականները կը հանդարտեցնէ դժուարաւ, յայտարարելով թէ Պէկեան էֆ. Տէրութիւն բոլոր չգործածեց:

Տ. ՀԱՄԱՅՆԱԿ ՎՐԳ. — (Գործք) Մեր միտքերն յուզողը նոր խնդիր մ'է որ՝ անցեալ նկատին երևան ելաւ, բայց ոչ իսկ մեր կարծածին չափ նոր, զի արդէն խնդրոյն քաղցեցութիւն կար, բայց ոչ ինք ու իր անուն:

Եթէ հարկ լինի եւ արձանացնելով պիտի հաստատուեմ որ՝ այս խնդրոյն տիրապետական տղեկացութիւն միմչև Բարձրեւոյն Սեզանայն առաջ Պատարագիչ Քահանային վերայ կիւրախէ, և Քարոզիչ Պաշտօնէին կամ գաւազան թուղու և կամ շողորթիթեւ կրտսիւնէ:

Ահա այս խնդիրն, որոյ արդեցութիւն գործելէ անեն տեղ կայ, նորի դիմակով հաս կը ներկայանայ:

Մենք ի՛նչ բան ընել կուզենք. — Նինչ նորի վերածել:

Շատ աղէկ, վայրկեան մը եւս ալ Չեր հետ՝ որ կուզեն ամեն հաստատութիւնք նոր ձևի վերածել: Բայց մէկ վայրկեանէն աւղին ես կը մտածեմ թէ՛ մենք չենք կարող ամեն բան նորի փոխելու, կարող պիտի ըլլայինք եթէ՛ ամեն բանի հեղինակութիւնն մերն ըլլայ:

Իրաւ մենք դրժիչ շատ բանի ձեռք գարկինք և դիտենք թէ՛ յաջողեցանք և ինչո՞ւ չէ՛. ահա խեղճ Հայաստանցոյն մեր եղբարց և ընրց աչաց արատաւք սրբեցինք, նոցա աղէտից հարկ եղած դարման տարինք, Ահմա՛նադրութեան վերաքննութիւն լրացուցինք, Հայկական դատարարական ուղին յորդեցինք, ևն. ևն. միայն ասոնք առաջարկեցինք ու ըսինք, բայց բան մ'ալ չըրինք. և աշխարհ հաւատաց թէ՛ երբ մենք մեր ձեռքեր վեր կառնուեք ամեն բան կը նորոզի և կը կատարուի:

Ահա կրկին այս սկզբունքով է որ՝ Եկեղեցական և Ազգային մի հաստատութիւն կերպարանափոխելու ձեռք գարկած ենք՝ հաստատութիւն մը որ՝ մեր Քրիստոնէական Ս. Եկեղեցին և դարերը նուիրագործած են:

Բուն խնդիրը:

Ուզեր են եղեր ոմանք յանուն Հայաստանեայց Եկեղեցոյ հաստատուած մի կրօնական ժողովն խառն եկեղեցականներէ և աշխարհականներէ կազմել:

Վայրկեան մը եւս ալ նոցա հետ և կրտսեմ ալ աւելի աղէկ կըլլայ եթէ՛ միմիայն ամբողջ աշխարհական կարգէ բաղիւսեալ կրօնական ժողով մը հաստատենք, որպէս զի նոր բան մը ըլլած ըլլանք և գուցէ այս խորհուրդը յղա-

ցողաց ալ աւելի շահաւէտ կըլլայ, և թէ՛ փոխանակ մի քանի եկեղեցականաց իրր կրօնական ժողովոյ անդամ փայն և լո՛կ անուանուած անուն մը տարու, իսկուս վերցունենք Եկեղեցական անուն:

Իսկ Եկեղեցական դասը որ՝ ներկայ ժամա, նակիս հագիւ եկեղեցեաց մէջ մէկ փիլոն ու ողաթափ ունին, թող զանի ալ անեն գութ ելլան:

Երեսփոխան է՛իջնտիք:

Սենն մարդ կրօն մ'ունի գոր կը սրաշտէ և ամեն կրօն իր սրաշտենայն:

Իւրաքանչիւր կրօնի կոչուած սրաշտենայն իրր կրօնական մարդ և թէ՛ սրաշտենայ իր ընդունած և հաւատք ընծայած կրօն քարոզելու, ուսուցանելու և նորա ամեն սրաշտամանց և ծիսից իրր սրաշտենայ հսկելու պարտաւորութիւնն ունի՝ հանդերձ վերակացութեամբ ընդ օրինաք իր կրօնին:

Մենք Հայերս իրր Քրիստոնէայ ժողովուրդ որ՝ 10 դարերէ ՚ի վեր այս մեծ անունը կը կրենք, պիտի կրնանք արդեօք ըսել թէ՛ մենք ալ մեր հաւատոյ սրաշտաման համար եկեղեցիներ, Սրբութեան սեղաններ, վիպարաններ, վա՛ջեր, մկնաստաններ կանդնած չենք. որիտ կրնանք ուրանալ արդեօք թէ՛ մեզմէ նոյն խեղ մեր մէջն մարդեր ընտրած, անոնց արժանաւորութեան, հաւատարմութեան, բարի վարուց, կրօնասիրութեան, ՚ի մի բան նոցա կատարելութեան համար Եկեղեցոյ Սրբավայր Բնմերը թէ՛ դացուցած չենք, արժանի է, արժանի է՝ ազգակներով և այս մեր վիպարութեամբը խնդրած չենք Ս. Եկեղեցիէն նոցա համար Քահանայութեան հովուութեան և վերակացութեան բարձր աստիճանի իշխանութիւնը:

Եւ ահա մեր ընտրանօք և մեր վիպարութեան եկեղեցական իշխանութեան բարձրացող Հարքն են որ՝ իրաւունք պիտի ունենան իրր կրօնական մարդ՝ կրօնի սրաշտենայ կոչուած և իշխանութիւն ստանձնած մէկը Հայրենի Ս. Եկեղեցոյ բոլոր աւանդութիւնքն անմեկին սրաշտական իրենց յանձնուած հօտը բարեք վերակացութեամբ խնամել՝ բոլոր կրօնի վերաբերեալ խնդիրներ միաբանութեամբ կարգադրել:

Եկեղեցոյ այս հովուութիւնը և վերակացութիւնը որ մեզմէ սմանք նոր ըլլալ կը կարծեն նոր չէ, այլ նոյն իսկ Աստուծոյ Որդոյն՝ մեր կրօնի հեղինակին դրութիւն է որ Աթենքեաց լերան վրայ յայտաւ Առաքելոց Ս. դո՛ղին ըսե-

լով ՝ Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն . . . (Մատթ. ԻԸ. 18) : Այս դերադրոյն իշխանութիւն է որ կը շնորհէ Եկեղեցին իր պաշտօնէից կացու լինելու:

Մեր փնտաւածն ալ ասկէ շատ հետու չէ՛ թէ՛ կարող են աշխարհական Եկեղեցոյ կրօնական ժողովոյ անդամակցիլ:

Պատմութիւն ՚ի ձեռն ունելով կրտսեմ թէ՛ մեր հայրենի Եկեղեցոյ մէջ 1871 տարիներէ վեր մինչև ցարդ յանուն եկեղեցոյ սրաշտամանց, յանուն կրօնական վարդապետութեան և դործոց յաւակացեալ ժողովոյ մը մէջ աշխարհականք մուտ գտած չեն, ուրիշ բան է որ մի կրօնական խնդրոյ համար մի քանիներ ներկայ դառնած և անոնցմէ խորհուրդ հարցուած ըլլայ, և սա աւօրեայ և ոչ իսկ նոյն ժողովոյ անդամակցելու իրաւամբ:

Ասի նոյն իսկ Առաքելոց և Քրիստոնէութեան ծաղման առաջին օրէն կը սովորինք:

Փրկչի ՅԱ թուոյն Առաքելոց գասը Երուսաղէմ Սիօն վերնատան մէջ կը գումարուի Յուդայ իսկարիովտացիի տեղ մէկն ընտրելու: Գործք Առաքելոցի մէջ կը կարդանք որ հոն 120 ՚ շափ անձինք ներկայ գտնուած են—այն է Քրիստոնէութեան դեա և առաջին տարուան հաւատացելոց վորքիկ խումբը—այս 120 ներկայից մէջէն ըստ առաջարկութեան Առաքելոց երկու ընտրելի կը ցուցնեն, ըսել է լո՛կ շնորոգական սրաշտենին ՚ի գործ դրին, որ այսպէս կը կարդանք «Արդ պարտ է յարանցս յայտանէ եկելոց ընդ մեզ յանձնայնի ժամանակի . . . վիպ յարութիւն ընդ մեզ լինել միում ՚ի սոցանէ՝ ուրիչ անսխալաբէս ետըը կը կարդանք «և կացուցին զերկուս» (Գործք Ա. 15—26)

Գարձեալ ՅԱ թուոյն Առաքելոց դասու Ք. ժողովն որ՝ նորադարձ Յունաց այրիներուն հանապազօրեայ սեղանոյն սրաշտամանէն այսինքն՝ կերակուրէ, ըմպելիքէ հանդերձէ և այլ պիտոյցներէ Հրէից այրիներէն յետեալ և զրկեալ գտնուելուն տրտունջ ու դժգոհութիւն բառնալու համար, ուր կը կարդանք «կոչեցին երկուսսանքն դադմութիւն աշակերտաց՝ (այն է 72 աշակերտներէն և թէ՛ նորոգ սրաշտաման կոչուածները) և ասն ոչ է հաճոյ թողուլ մեզ զբանն Աստուծոյ և սրաշտել զսեղանն. ընտրեցէք եղբարք վիպարս ՚ի ձէնջ արս եօթն» այս ստաջարկութեան վերայ ա-

շակերտք իրենց մէջն եօթ հոգիք կընտրեն և Առաքելոց կը ներկայացնեն Առաքելաբ. աղօթելով ձեռք կը դնեն նոցա վերայ և սրաշտակատան սարկաւագութեան, որպէս զի հաւատացելոց սեղանոյն առանց զրկելու հաւատարմապակարարութեան հոգ տանին, զի այն ժամանակին հաւատացելոց ինչք հաւատար էին և թէ՛ կը բերէին Առաքելոց կը յանձնէին իսկ այժմ նորա հակառակն է: (Գործք Զ. 1—7)

Սոյնպէս ՅԱ թուոյն Առաքելոց Գ. ժողովն տեղի ունեցած է դարձեալ Երուսաղէմ մը:

Հեթանոսութենէ ՚ի Քրիստոս նորադարձ հաւատացելոց համար փարիսեցոց աղաղէն ետող Հրէայք կըսէին թէ՛ պէտք են ի վիստաւիլ ըստ Մովսիսական օրինաց և օրինապահ ըլլան փարիսեցոց այս խօսքեր հաւատացելոց մէջ գայթակղութիւն ձգած էր, ասոր առաջընտանելու համար Առաքելոց և երիցանց ժողով մը կը գումարուի որ կը կարդանք այսպէս «Եւ ժողովեցան Առաքելաք և երիցուք տեսանել փասն բանին այսորիկ» (Գործք Ժ. 1—55)

Առաքելոց երից ժողովոց պատմութիւն այս կը ներկայացնէ մեզ և ոչ ուրիշ բան թէ՛ աստ կրօնական սրաշտամանց վերաբերեալ գործքերն իրենց կը պահէին, թէ՛ և մարմնաւոր սեղանոյ սրաշտամուկն ալ եօթն Արկաւագաց կը յանձնէին:

Այսպէս նաև Քրիստոնէական ընդհանուր եկեղեցեաց երեք Տիեզերական ժողովներն ուր աշխարհականի մը անուն ենք գտներ:

Ա. Նիկիոյ ժողով ուր ներկայ գտան Յ18 Հայրապետք Յ25 թուոյն Արիստի մորթութեանց դէմ:

Բ. Կ. Պոլսոյ ժողով ուր ներկայ գտան 180 Հայրապետք Յ81 թուոյն Մակեդոնի մորթութեանց դէմ:

Գ. Եփեսոսի ժողով ուր ներկայ գտան 200 Հայրապետք 431 թուոյն Նեստորի մորթութեանց դէմ:

Այս երեք Տիեզերական ժողովոց մէջ իբր ունկնդիր թագաւորք ալ ներկայ շանուած են և ոչ վճիռ տալու իրաւամբ:

Գաղով մեր ազգային և հայրենի Եկեղեցոյ պատմութեան:

Կը տեսնենք թէ՛ Հայաստանեայց Հայրապետութեան և թագաւորութեան օրերուն մէջ Հայրապետք և թագաւորք սերտ յարաբերութիւն ունեցեր, մէկզմէկու հեա շատ անգամ իրր կայր և որդի աղրած են ՚ի նշոյնս Վու-

աւարիչ և Տրդատ, Վրթանէս և նոյն Տրդատ — Սահակ Մետրովսի և Վահագնապուհ — ասոր հակառակ Հայրապետի և Թադաւորի մէջ անհամաձայնութիւններ տեղի ունեցած են, ինչպէս Մեծն Ներսէս — Արշակ և Պապ — Յուսիկ և Տիրան Բ. որն որ կուզէր ամբարշտին Յուլիանոսի օրատկերը իր Թագաւորական եկեղեցւոյ մէջ կախել տալ որ Ս. Հայրապետ առաջեփնը զարկաւ և կտոր բրդուճ ըրաւ և ինքն նահատակուեցաւ Տիրանէն :

Հայաստանեայց Հայրապետք Թագաւորութեան օրերու մէջ ալ յատկացեալ մի կրօնական Ժողով ունեցեր են որ ատեն ատեն իրենց Նախագահութեան ներքեւ կը գումարէին և ինչ ինչ կարգեր և կանոններ կը հաստատէին, ուր Թագաւորաց և Իշխանաց միջամտութիւն չկար :

Թագաւորք ևս հանդերձ Նախարարք ժողովներ կ'ունենային, Պատերազմի, դաշանց, խաղաղութեան, երկրին քաղաքական տնտեսութեան և այլ կարևոր խղածներու վրայ խորհելու :

Բայց երբ ընդհանրապէս յանուն Ազգի յանուն եկեղեցւոյ և Հայրենի իրաւանց և պաշտպանութեան ժողով մը ընել հարկ ըլլար անատեն ամենքն մի էին : Հայրապետն ու Թագաւորն Եպիսկոպոսն ու Նախարարք. ինչպէս որ 383 թուոյն Վաղարշապատու Գ. ժողովն որ հրաւիրեց Մեծ Ներսէս իր բոլոր Եպիսկոպոսաց և Վարդապետաց դասը Պապ Թագաւորը և Հայ Նախարարները — զանոնք ի սէր, ի միաբանութիւն, ի խաղաղութիւն, և ի զգաստութիւն անդր յորդորելու, ուրիշ զի մի պայծառանար Եկեղեցին և Հայրենի աշխարհը — :

Այսպէս 431 թուոյն Ս. Յովսէփ և Ղևոնդ երէց որ բոլոր հաւատացեալ Նախարարաց հըրաւէր կը կարդան, ասի անիշխանութեան ժամանակին և Ազգային Ընդհ. Ժողով մը տեղի կ'ունենայ ի Վաղարշապատ որովհետեւ խնդիրը Եկեղեցւոյ և Հայրենեաց կը պատկանէր, և կրօնականք որք Պատերազմի ժամանակ վանքերու մէջ կը փակուէին կը մնային, ազգային այն անիշխանութեան ժամանակին Վարդանանց պատերազմին Աւարայրի դաշտին մէջ իրենք ալ ներկայ գտան :

Իսկ երբ խնդիրն զուտ կրօնական լինէր ան ատեն Հայրապետն ազատ էր ինքնին ժողով գումարել ինչպէս —

328 թուոյն Վաղարշապատու Ա. Ժողովն

ընդ նախագահութեամբ Ս. Հորն մեր Լուսաւորչի ուր միայն ներկայ գտան 300ի չափ Եպիսկոպոսուք և Երիցանց դաս :

Ժողովոյ ներկայանալը խնդիրն Նեկնոյ Ս. Ժողովոյ հաւատոյ Հանդանակին վաւերացումը, որ Ս. Արիստակէս իր հետ բերաւ :

365 թուոյն Աշտիշատու Ա. Ժողովն Մեծն Ներսէսի հրաւիրմամբ, ուր ներկայ գտան Եպիսկոպոսուք Երիցուք — հոն հրաւիրուեցան նաև նախարարաց գունդ, որոնք իրենց նախարարական սերունդն պահելու համար իրենց ազգականներն կ'ուղարկէին կ'առնուին, և այս Ժողովին մէջ արդիւնք նախ Ս. Ներսէս՝ մերժելով այն ապօրինի ընթացքը՝ իր հետ զբաւուած Եպիսկոպոսքն և երիցամբ հանդերձ :

428ին Վաղարշապատու Ե. ժողովն որ գումարեց Սահակ Պարթև միայն Եպիսկոպոսաց Վարդապետաց և Երիցանց դասը՝ օմանց հերձուածողաց մտորութեանց դէմ առնելու որ տեղի ունեցած էր Հայրենի աշխարհին մէջ :

452ին Աշտիշատու Բ. Ժողովն որ դարձեալ Ս. Սահակ Պարթև գումարեց յետ իւր աքսորանաց՝ Եպիսկոպոս, Վարդապետ եւ իրիցանց դասը միայն, որ իր աքսորանաց վերադարձին Եկեղեցեաց յարգն ու կանոնն խանգարուած գտաւ, Քրիստոնէական հաւատոյ թողումի եւն. եւն. ասոնց առաջն առնելու համար :

455 թուոյն Աշտիշատու Գ. ժողովն Եփեսոսի Ս. ժողովոյ Հարց կողմանէ առ Հայաստանեայց ուղղուած հաւատոյ թողմն ընդունելու համար, զոր կրկին հրաւիրեց Ս. Սահակ միայն եկեղեցական դասը — :

Այսպէս են 598ին 648ին Գունայ մէջ տեղի ունեցած 7-8 կրօնական Ժողովներն — կը թողում 1080 թիւէն՝ սկսեալ մինչեւ 1380 թուականին Կիլիկիոյ մէջ տեղի ունեցած կրօնական Ժողովներն :

Այս ամենը մեր Ազգային եւ Եկեղեցւոյ պատմութիւնն մեզ կը ներկայացնէ, պատմութիւնը առասպել չէ, որ ինչպէս բրուտը կար կը գործէ եւ ուզածին պէս կը փոխէ, անանկ փոփոխուի, այլ անդամանդ եւ գոհար է որ ապակոյն վրայ անջնջ խօսքեր կը քանդակէ :

Մինչև հիմա ես անոր կրթնած խօսեցայ և եթէ մեր Հարց օրերուն զուտ կրօնական խնդրոց համար կարգեալ ժողովոց մէջ աշխարհականներ չկարացի գտնել, յանցանքն իմ չէ, այլ իրեն (պատմութեան). դուք կուզէք ուրեմն անոր սխալանաց համար ինձ ընդ առձամբ

Հայել, ազատ էք, բայց նա ալ սխալած չէ որովհետեւ մեր խօսքերու առարկութեան հետ յինական Աստուծոյ Արդին է և ոչ մեզ, պատմութիւն այսպէս գրուեցաւ՝ և ինքն ամենայն հաւատարմութեամբ մինչև այսօր իր էջերն բաց կը թողու մեր առջև որն որ չենք կարող փոխել՝ կարող պիտի ըլլայինք եթէ հեղինակութիւն մերն ըլլար :

Եւ հիմա կըսեմ Երեսփոխան Էփէմոսներ եթէ դուք կը գանգաւորք թէ ուսեալ եկեղեցականներ չունինք որոցմէ կրօնական Ժողով կարգենք — ես ալ կըսեմ թէ՛ փոխանակ ամեն ժամանակ և ամեն տեղ այս տարադէպ գանգաւաններն ընելու՝ ուսեալ և քանիտեն եկեղեցականներ հասցնելու միջոցին վրայ խորհինք, թէ միայն արժանաւոր անձանց վերաբերելու տանք ձեռնադրութեան Ս. կրօնին ընդունելու. եթէ կը գանգաւորք թէ՛ կրօնական Ժողովներն մինչև ցարդ ամբողջ և կեղեցականներէ ըլլալ նուն բնաւ գործ չկարացին տեսնալ, ասոր յանցանքն ժամանակին ընթացիցն էր և թէ՛ նա ալ միւս ազգ. այլ և այլ ժողովոց չափ կըցաւ գործել, բայց միայն այս տարի մէկ նիստով անցուց : Եթէ կը գանգաւորք թէ՛ մինչև ցարդ կրօնական Ժողովներն եկեղեցականներէ ըլլալուն, եկեղեցւոյ սէրը ժողովրդեան սրտին մէջ մարեցաւ, ասոր ալ յանցանքը իմ և ձերն է՝ որովհետեւ հայկական ճշմարտ կրթութեան և դաստիարակութեան ծաւալմանը հոգ չտարինք, ազգային վարժարանաց մէջն Քրիստոնէական եւ կրօնական դասերն անօգտ համարելով վերացինք : Եթէ կը գանգաւորք թէ՛ կրօնական Ժողովն զուտ եկեղեցականներէ ըլլալուն՝ ամեն մէկ Վարդապետ կամ Քահանայ տարին 20-50 անգամ մեռել թաղելու կերթան և այն միջոցով իրենց նիւթական ազրուտը ձեռք կը բերեն և կապրին և ասոյն ժողովուրդն աղքատ է, այն ալ ըստ ինձ իմ բաժինն ուղղին կուտամ — ուրիշ կը հետեցրնեմ թէ՛ թիչ մ'ալ ուղարկութեան առնելու պէտք ունինք Երեսփոխան Էփէմոսիք՝ կրեական դասուն նիւթական և բարոյական վիճակ — վազն զի խեղճութեան դուռն հասած է :

Վերջապէս եթէ ձեր մէջն ըսողներ կան թէ՛ ո՛չ, եկեղեցւոյ օրէնքն է որ՝ կրօնական Ժողովոյ մէջ աշխարհականք ալ անդամակցելու իրաւունք ունին, թող ինձ պատմութիւն ի ձեռքին, արդարութեամբ և Քրիստոնէական խղճի ցոյց տան :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՑ. — Յ. Ն. Ք. Չ. Ժ. Չ. Ը. Չ. Քիչ մ'առաջ երկու կողմանք ալ համամտօրէն ընդունեցին՝ առ այժմ ըստ որամադրութեան Սահմանադրութեան կրօնական Ժողով մը կարգուի և ներկայ խնդիրը վերաքննութեան վերապահելու առաջարկութիւնը : Քաղ. Ժողովը կարծիքն ալ այս է, Քաղ. Ժողովը կրօնականին կարգութիւնն ատրոպոզական կը ճանչէ և կը խնդրէ Ժողովը անոր ըստ Սահմանադրութեան կարգութեանը փութալ : Եթէ Ժողովը տրամադիր լինի նոր և տարբեր առաջարկութիւն մ'ընդունելու և կրօնական Ժողովը ընտրութիւնն ուրիշ ձևով որոշելու : Քաղ. Ժողովն՝ իբրև Սահմանադրութեան օգուցն պահապան՝ սորա սկզբանց և որամադրութեանց անհամաձայն որ և իցէ նոր բան մը կ'մ եղանակ չը կրնար ընդունիլ, նախ քան զվերաքննութիւն : Եւստի կը յայտարարէ թէ՛ իւր փախալն է, ինչպէս առաջարկեց Տ. Մատթէոս Վրդ. և կրկնեցին Գափապեան և Իսիկճեան Էփէմոսիք, կրօն. Ժողովն արդի գրութեամբ անմիջական կազմութիւնը տեսնել, որոյ աջակցութեան մեծ պէտք ունի Քաղ. Ժողովը մասնաւորաբար առ կախ թողեալ խել մը վարչական խնդիրներն ի գլուխ հանելու համար :

ՄԱՄԻՈՒՆԵԱՆ Ս. ԷՑ. — (Գ. Մ. Չ.) Նախորդ նստին մէջ Մարկոս Էփ. Ազարէգեան ջանաց հա առանել պատմական տեղեկութիւններով թէ՛ ի հնուց մեր Ազգին մէջ գումարուած Եկեղեցական կամ կրօնական Ժողովներուն մէջ ըստ անգամ աշխարհական անդամներ ալ գտնուելու են և առաջարկեց որ այս անգամ ալ Ազգը սոյն գրութեան հետեի և ընարեթի կրօնական Ժողովոյ մէջ աշխարհական անդամներ զբաւուին :

Ազարէգեան Էփէմոսի յառաջ բերած պատմական տեղեկութեանց ստուգութիւնը և կամ երբեմն այսպիսի խօսան Ժողովներու կազմութիւնը ինչ պարագաներէ ծագած ըլլալը քննելու հարկ չեմ տեսնել, վասն զի ինչ որ ալ ըլլայ առանց ստորոգական պարագայի մէջ ըլլալու, այս գրութիւնը Ազգային Վարչութեան մէջ մտցունելու փորձը դանազան պատահաներով օգտաւէտ չերեար ինձ :

Ար ինչեմ թէ նախորդ նստին մէջ Ս. Նախագահը ըսաւ թէ ասիկայ եկեղեցական յեղափոխութիւն մ'է և ոչ ոք կուրանայ թէ կրնա փոխանական Ժողովոյ ձեռնհասութեանն վեր է կրօնական խնդրոց նկատմամբ յեղափոխու-

թիւն ընելու մեծ գործը . և եթէ իրօք եկեղեցական վերանորոգութեան սկիզբը կը տեսնուի , այն գործին ալ մերը չըլլալը անուրանալի է :

Ժամանակակից պատմութիւնը կը յիշեցունէ մեզ թէ՛ մենք ալ ունեցեր ենք խառն Ժողովներ , Ազգ . Սահմանադրութեան հեղինակներն ալ չեն մոռցեր զանի իրրև օրէնք աւանդելու մեզի , բայց միայն անխիստութեան և կամ անսովոր պարագայներու համար :

Սահմանադրութիւնը որոշած է նաև Գատաստանական խորհուրդ մը , որուն պաշտօնը ազգ . աշխարհականաց դասուն պատկանեալ ըլլալուն , Բհոն բազմած է հասարակաց և կեղեցականը և աշխարհականը :

Իսկ Արօնական Ժողովոյ պաշտօնը լոկ կրօնական կամ եկեղեցական խնդրոց պատկանեալ լինելուն , առ այժմ ինչ հարկ և ինչ ըստիսում ի կը պարտաւորէ զմեզ հոն աշխարհական անգամներ մտցունել :

Եթէ Մարիս էֆ . կը պնդէ թէ լոկ հին դրութեան հետեւելու նպատակու է իւր այս առաջարկութիւնը , ես կը պատասխանեմ թէ քանի որ Ազգը խել մը հին կենսական բաներէ զրկուած է , կրնայ առ այժմ ասկից ալ զրկուիլ , և այսպիսի նոր նոր խնդիրներով չըրազեցունել Ընդհանուր Ժողովը , թողով ժամանակին որ աշխարհականաց մէջ կրօնադէտներ , աստուածարաններ և պատմադէտներ հասցունէ և այն ատենը փորձենք օգնել ազգ . կղերին :

Քաղով վերոյիշեալ առաջարկութեան քաղաքական առմամբ քննութեանը , կը յիշեցունեմ թէ՛ ասոր գործադրութիւնը Հայ Ազգը ամէն քաղաքական իրաւունքներէ զուրկ , իրր լոկ կրօնական հասարակութիւն մը ցըցունել է աշխարհի առջև . ասոր վնասակարութեան վրայ երկարօրէն խօսիր անօրում է :

Աստի կ'առաջարկեմ որ չը շեղինք Սահմանադրութեան տրամադրութեան և ըստ այնմ ձեռնարկելը անսխալապէս կրօնական Ժողովոյ ընտրութեանը , որուն չգոյութիւնը զգալի տեղ մը բռնած է Ազգ . վարչութեան մէջ . և եթէ կ'ուզենք այս մասին ինչ ինչ փոփոխութիւններ մտցունել , թողունք Սահմանադրութեան այն յօդուածին վերաքննութեան ժամանակին , որ խորհելով յարմարադոյնը անօրինակը այն ատեն :

Բազմաթիւ Երեսփոխանք հեռագրեալ

խօսք կուզեն , խնդրոյն վրայ իրենց կարծիքն հաղորդելու համար . Ատենապետ էֆ . կը յայտարարէ թէ՛ ատենը դոցելու ժամը հասած ըլլալով՝ ոչ մէկու խօսք կրնայ տալ :

Քաղաքական Ժողովոյ Ատենադպիր Կուսուֆեան էֆ . կ'առաջարկէ քուէի դնել Տ . Մատթէոս Ալարդապետի առաջարկութիւնն , որ Քաղ . Ժողովոյ կարծեաց համաձայն էր և բազում երեսփոխանաց կողմէ ընդունելութիւն գտած :

Օգտէն և Պէկեան էֆէնտիները կ'առարկեն և կը պնդեն թէ՛ Մարիս էֆ . ի առաջարկութիւնն՝ ըստ որում Ժողովոյ շիտադրութեան ենթարկեալ՝ պէտք է որ վերջնական վճիռն անելով ընդունուի կամ մերժուի :

Ալերջապէս կարծիքներն ու ձայները կը շատնան և թեթև շուկ մը կրնթանայ ՚ի Ժողովն : Ատենապետ էֆ . կը յայտնէ որ , եթէ Ժողովն ուզէ , պատրաստ է քուէի դնել վիճաբանութեան շարունակութիւնը և կամ նրօն Ժողովոյ ըստ Սահմանադրութեան ընտրութիւնը . և երբ մի քանի ձայներ վիճաբանութեան շարունակութիւնը կուզեն , կը յաւելու թէ ընդամենը հինգ վայրկեան միջոց կայ ատենաքոցելու համար և թէ նորընաիր երեսփոխանաց ընտրութիւնը կան , այս միջոցին մէջ վաւերելի :

Ինթիլիճն Ա . էֆ . — Եթէ այսպէս մինչև աստուտ ալ վիճաբանիմք չէ կարելի որոշում տալ և այս խնդիրը լուծել . վասն զի Սահմանադրութեան վերաբերեալ խնդիր մ'է և անոր օգույն դէմ մեր վիճելն ստորէն է . քանի որ Սահմանադրութիւնն ընդ վերաքննութեան է , ըսել է այս խնդիրն իւր տեղն ու ժամանակը պիտի ունենայ . ինչ հարկ կայ ուրեմն հիմայ երկար վիճաբանութիւններ ընելու . կազմեմք ըստ առաջնոյն մեր կրօն . Ժողովն , ու Սահմանադրութեան վերաքննութեան պահեմք նորա կաշմութեան եղանակին վրայ ընելիք բոլոր վիճաբանութիւննիս :

Պէկեան Թ . էֆ . Ամենևին ոչ . քանի որ խնդիրը հոս եկաւ և վիճուեցաւ , պէտք է իւր վերջնական վճիռն ընդունի . պէտք է որոշուի թէ՛ կրօն . Ժողովը խառն պէտք է վննի , եթէ ոչ ՚ի կրօնականաց միայն :

ԵՌՄՈՒՅԵԱՆ Տ . էֆ . Երբ խնդրոյ մը վրայ կը խօսիմք և կը վիճեմք , պէտք է գիտնամք թէ ինչ նպատակի կը յանդի մեր խորհուրդն

և ինչ կը նշանակէ մեր խօսքն . իւրաքանչիւր երեսփոխան իրաւունք ունի հոս խօսելու , բայց անպատճառ խօսելու համար հոս եկած չէ , այլ ըստ հարկի պահանջման :

Երբ խնդիր մը կը լինէ Ժողովոյ ատենանը , ամեն երեսփոխան իւր կարծիքը կը հաղորդէ , բայց վերջապէս ամեն անձնական կարծիք կը լուեն , երբ ձայնից առաւելութեան որոշմամբ խնդրոյն որ և է լուծում կը տրուի :

Հիմայ կրօն . Ժողովոյ խնդրոյն վրայ երկու կարծիք յայտնուեցան և Ժողովականք միոյն կամ միւսոյն յարեցան , սակայն խնդրոյն բնութիւնը չը ներէր որ երկար վիճաբանութիւններէ վերջը կարող ըլլամք վճուական հետեանքի մը հասնիլ . զի ամեն նոր կարծիք՝ այս խընդրոյն վրայ՝ Սահմանադրութեան օգույն դէմ է . ուստի Քաղ . Ժողովը պէտք կըզայ յիշեցընել Ժողովոյ որ՝ անկարելի է մեր արդի Սահմանադրութեան տրամադրութեանց հակառակ կրօն . Ժողով կազմել . մինչև իսկ եթէ Ժողովը տարրեր եղանակ մ'ալ որոշէ , Քաղ . Ժողովը պիտի ստիպուի զայն մերժել , ըստ սրում Սահմանադրութեան կը հակառակի այն :


Պէկեան էֆ . կըսէ թէ՛ քանի որ խնդիրն հոս եկաւ , պէտք է վերջնական որոշում մ'աւանու և ընդունուի կամ մերժուի . չեմք կրնար ընել այդ , վասն զի իւր հետեանքն ունի , զոր պէտք է այժմէն ՚ի միտ ածել :

ԽՕՃԱՍՏՐԵԱՆ Օ . էֆ . — Քաղ . Ժողովը մեզ առաջարկութիւն մը կընէ , և եթէ այդ առաջարկութեան դէմ վարուելու ըլլամք , հետեւանքը կը յիշեցնէ մեզ . սակայն ես կըսեմ թէ՛ գործ մը , խնդիր մը մինչև որ իւր վախճանին չհասնի , ետ չթողուիր : Հիմայ Քաղ . Ժողովն երբ կըսէ թէ՛ եթէ խնդիրը Սահմանադրութեան օգույն հակառակ որոշում մ'աւանու , կը հրաժարի . . . :

ԵՌՄՈՒՅԵԱՆ Տ . էֆ . Ատենադպիր Քաղ . Ժողովոյ , ոտք կը լինէ և ատենաբան էֆէնտիին խօսքն ընդմիջելով բուան կերպիւ կը բողոքէ անոր սխալ բացատրութեան դէմ , և կը յայտարարէ թէ՛ անեւեին հրաժարման բառ չէ արտասանած և այդպիսի կարծիք չէ յայտնած : Դիւանը կը հաստատէ ԵՌՄՈՒՅԵԱՆ Տ . էֆ . յայտարարութիւնը :

Մի քանի նստարաններու վրայէն անկանոն և անհասկանալի ձայներ կը բարձրանան . «-է , և շուրճակներէն բառերը կիսատ կերպով լսեսի կըլան երբեմն . պահ մը շփոթութիւն կը տիրէ , և ըստ որում որոշեալ ժամն անցած , Ատենապետ էֆ . ատենանը կը գոցէ ժամը 10 3/4 ին :

ՓՈՒՍՆԱԿ ԱՏԵՆԱՊԵՏԻ ԱՏԵՆԱԳՊԻ Ք . ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Յ . Հ . ՄԵՐԵՆՄ-ԳՈՒԼԻ



Faint, illegible text at the top of the left page, possibly bleed-through from the reverse side.

Second section of faint, illegible text on the left page.

Third section of faint, illegible text on the left page.

Fourth section of faint, illegible text on the left page.

Faint, illegible text on the right page.

Faint, illegible text on the right page.

Faint, illegible text on the right page.

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՄԵՓԸԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Գիւանատան Պատրիարքարանի, և կը գտնուի
Նկեղեցեաց բանկալները: